Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

99-30.1-Մ2-3 գլխավոր մասնագետ(2023-04-28)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ | քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն | գլխավոր մասնագետ, (99-30.1-Մ2-3)

1.2 Ենթակա և հաշվետու է

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս գլխավոր մասնագետներից մեկը

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, ք.Եղեգնաձոր Շահումյան 5

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. Իրականացնում է համայնքներում ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանների տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողության աշխատանքներ.
2. Իրականացնում է Մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմման, համայնքների գոտիավորման նախագծերի մշակման, գլխավոր հատակագծերի նախագծման առաջադրանքների և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը.
3. Իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմիններում ստուգումների անցկացման աշխատանքներ՝ համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքերի հայտնաբերման, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա.
4. Իրականացնում է քաղաքաշինական գործունեության և ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ հսկողության աշխատանքներ.
5. Իրականացնում է մարզպետի աշխատակազմի ենթակայությանը հանձնված ուսումնական, մշակութային, առողջապահական կազմակերպությունների շենքերի կառուցմանը, շահագործմանն ու պահպանմանն ուղղված աշխատանքներ.
6. Իրականացնում է Մարզի բնակավայրերի պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների նախագծեր կազմելու աշխատանքներ.
7. Իրականացնում է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթման, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ կառուցապատման դեպքերի ուսումնասիրության, հայտնաբերման աշխատանքներ.
8. Իրականացնում է Մարզի համայնքներում աղետի հետևանքով, ինչպես նաև վթարային դարձած (բնակության համար ոչ պիտանի) բնակելի տների հաշվառման աշխատանքները.
9. Իրականացնում է Մարզի տարածքում ջրամատակարարման, ջրահեռացման և գազամատակարարման խնդիրների առնչությամբ պետական կառավարման համակարգի մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների գործունեության համակարգման աշխատանքները.
10. Իրականացնում է Մարզում աղբավայրերի շահագործման, սուբվենցիոն ծրագրերով ոլորտին ուսումնասիրության աշխատանքներ.
11. Իրականացնում է պետական աջակցության ներդրումային ծրագրերով կառուցված բնակարանների անհատույց սեփականության իրավունքով հատկացնելու գործընթացը.
12. Իրականացնում է Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքներ:

Իրավունքները.

1. իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում իրականացնելու հսկողություն Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում, համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացնել Վարչության պետին.
2. մասնակցել համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ առաջադրված խնդիրների լուծման շուրջ կազմակերպված մասնագիտական քննարկումներին.
3. համապատասխան մարմիններից պահանջել՝ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվություն, անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր, տեղեկատվություն.
4. ճշտել տրված առաջադրանքի համապատասխանելիությունը և մասնակցել նախագծողների հետ մասնագիտական քննարկումներին, ծանոթանալ նախագծերում կատարվող փոփոխություններին և ստուգել շինարարության թույլտվության համապատասխանելիությունը.
5. համայնքների ղեկավարներից պահանջելու անհրաժեշտ հիմնավորումներ կատարված աշխատանքների վերաբերյալ.
6. Մասնակցել ջրամատակարարման, ջրահեռացման և գազամատակարարման պետական կառավարման համակարգի մարմնի համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարների հետ կազմակերպված խորհրդակցություններին

և նրանց ուշադրությունը հրավիրել ծագած խնդիրների լուծման անհրաժեշտության վրա.
7. համայնքի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա տեղական նշանակության հուշարձանների փոփոխման վերաբերյալ նախապատրաստել և տրամադրել եզրակացության.

Պարտականությունները.

1. արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասների գնահատման, աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ հավաքագրել տեղեկատվություն և ներկայացնել Վարչության պետին.
2. ներկայացնել փորձաքննություն անցած քաղաքաշինական փաստաթղթերը շահագրգիռ կողմերի համաձայնեցմանը՝ շինարարության թույլտվության ստացման նպատակով.
3. ստուգել պայմանագրային կետերի կատարմանը, ըստ անհրաժեշտության ներկայացնել զեկուցումներ Վարչության պետին՝ համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների վիճակի մասին.
4. ուսումնասիրել և ներկայացնել Մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջող օբյեկտների ցանկը և ընտրված օբյեկտի վերաբերյալ կայացած որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություն
5. առաջարկություններ ներկայացնել արտոնագրված կազմակերպություններին վնասների փոխհատուցման վերաբերյալ հաշվարկներ կատարելու վերաբերյալ.
6. հետևել Մարզում շինարարության ընթացքին և օբյեկտներում իրականացվելիք կամ իրականացվող աշխատանքների վիճակի մասին զեկուցումներ ներկայացնել Վարչության պետին.
7. հսկողություն իրականացնել ինքնակամ կառույցների հայտնաբերման ուղղությամբ և առաջարկել համայնքների ղեկավարներին՝ դրանք կանխելու և համապատասխան փաստաթղթեր ձևակերպելու և թերությունները վերացնելու համար:
8. նախապատրաստել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, եզրակացություններ:
9. իրականացնել քաղաքացիների ընդունելություն, անհրաժեշտության դեպքում տրամադրել մեթոդական պարզաբանումներ:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1. ուղղություն
ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն

2. ոլորտ
ճարտարապետություն և շինարարություն
ճարտարագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ արդյունաբերության կամ գեոդեզիայի և քարտեզագրության կամ քաղաքաշինության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ.

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Ծառայությունների մատուցում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման կամ դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ

նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական կամ տարածքային ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: